

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդը ըլլալ ուղորդ մէկ արծաթ. Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար ինկ գաւառաց մէջ 25 դր, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման առդր 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որչ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն Ի. Ղալաթիա Ս. Լուսաւորիչ, Էկեղեցւո փարի դրանը կից. Նոր Գրատունը :

### Ս. Ձ Գ Ս. Յ Ի Ն

Ազգային դատաստանական խորհուրդը վերջին օրերս զբաղած է, ամուսնական զարհուրելի խնդրով մը : — Այս կէց երկու տարիի չափ յառաջ, մալ վերը ճերմկած 70 տարեկան հարուստ բայց կծծի հայ մը, Պատրիարքարանի մէջ նշանուելով հաղիւ 20 տարեկան եղող գեղեցիկ կայտառ ու առոյգ բայց ուրբան օրիորդի մը հետ, կպակուի դարձեալ Պատրիարքարանի հրամանաւ : Եստ օրեր չեն անցիր, կսկսին տեսնուել այս անյարմար և անբնական միաբերութեան աղետալի հեռեանքը, որուն պատճառ թիւնը ոչ ոք կրնայ բնի առանց արտասուաց, առանց բարկութեան, և առանց մեծ ցաւ ըզգարու : Այն օրէն ի վեր օրիորդը թըլու առացած, նիհարցած և իր բոլոր յատկութիւնները կորուսած, բոզը քները կ'ընկնէր, դատաստանական խորհրդոյն, բայց արդ արդ թիւնն ու թիւնառի մը իրաւունքը խեղդուեր են այդ ին մէջ շտապելու և մանաւանդ սկզբնայն ծանօթ եղող Սեյիթաբեկ աղայի միջամտութեան միջնորդութեան պաշտպանութեան և այլ և այլ

միջոցներու շարհիւ : Մեր առած տեղեկութիւնները մեզի բաւական կըլլատահացունեն թէ արդ ի դատաստանական խորհուրդը պիտի զթայ թըլու առ օրիորդին վրայ, զոնէ անոր ապագայն պիտի անդորրէ, և չպիտի անպատիժ թողու այն գաղանաբարոյ ճիւղ ձերուին, որ ըստ մեզ մարդասպանն մը աւելի ոճրագործ է :

Կը համարձակիմք դատաստանական խորհրդոյն իմացունել թէ ինդիւրը եթէ ինպատ օրիորդին անմեղութեան չկարգադրուի, բոլոր պարագաներովք հասարակաց աշխանք պիտի հանենք զայն, առանց երբէք նայելու թէ ծանր կազայ հասարակաց լուրեաց :

Կհարցունենք Պատր. փոխանօրդը եր. կարագեա վարդապետին թէ անպատիժ պիտի մնայ այն քահանայն որ Պատրիարքարանը խաբած է, ծաղկահատակ օրիորդի մը և զառամեալ ձերուինի մը տարիքները ծածկելով և պտակելու հրաման յախշտակելով : Այսչափ անու չաղլութիւն վայել է այսպիսի կենտական փափուկ խնդրոյ մը մէջ :

— Տնտեսական խորհրդոյ առաջարկ

կութեամբ, Պատրիարքարանը երէկ խնդրեր է կայսերական կառավարութենէն որ բարեհաճի վրան՝ հաց ու ջուր շնորհել Պէշիկթաշի կարօտ հըրկերէրոց համար:

Տաճկերէն առաջին գրագիր է Ֆէնտին Պատրիարքարան չգանուելուն պատճառաւ, յիշեալ խնդրագիրը ուրիշ տեղ գրուեր և Պատրիարքարան բերուեր կնքուեր է: Ինչո՞ւ արդեօք գիւանատան էֆէնտիներէն ոմանք այսպէս պակասաւարտեանուելով իրենց պաշտօնին ու պարտաւորութեանց մէջ, անդի կուտան դժգոհութեան:

— Մամաթիոյ թաղական պատուարժան խորհուրդը յատկապէս կինդրէ մենէ ծանուցանել Մամաթիոյ մեծ թաղեցւոց թէ իրենց և բարետէրազգայնոց յայտնած փափաքանաց համեմատ, Ս. Գէորգ եկեղեցւոյ և երկտե՞ս վարժարանաց նորոգ շինութեանը մասին թաղեցւոց կարծիքն ընչունելու համար թաղական ընդհանուր ժողով գումարել որոշուած է, յառաջիկայ կիրակէ, յուլիս 13, ի ժամ 8, ի Ս. եկեղեցին:

Կյուսամք թէ, մեծ թաղեցիք բնիւմ խորհրդոյն այս հրաւերն, ներկայ կդանուին նոյն օրը որոշեալ ժամուն, և յիշեալ կարեւոր խնդրոյն վերայ իրենց կարծիքն հաղորդելով, կը փութայնեն շինութեանց սկզբնաւորութիւնը:

ԽՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական կառավարութեան նորահանց խառնելուն երթեկեկող, թէ օտմանեան հպատակ և թէ օտար վա-

ճառական նաւերուն վերաբերեալ արդոց համար նոր անօրինութիւն մը ընելու պաշտօնով, յանձնաժողով մը կազմուեր է ընդ նախագահութեամբ նաւահանգստաց վերատեսուչ Զօպարթ փաշայի:

— Վիէնայի Բրէն լրագրին նացելով, Աւստրիոյ երկաթուղեաց ընկերութեան և Լոնկարտիոյ երկաթուղեաց ընկերութեան մէջ բանակցութիւն կըլլայ՝ օսմանեան Բումբերի երկաթուղեաց շինութեան դործին յանձնառու ըլլալու համար:

— Պիէճիկի Սէօկիւա գիւղաքաղաքը սանտիկ անձրև գալով, հեղեղները բոլորովին փլուցեր են քարուկիր կամուրջ մը, և ուրիշ կամուրջ մ'ալ բաւական վրասեր, և երկու տունի մէջ ալ մտնելով շատ կարասի առերտարեր են: Սակէջ զատ, շատ մը շաղպաներու և պարտէզներու ալ վնաս եղեր է, բայց բարեբաղդաբար մարդու կորուստ չլուիր:

— Իզմիրի ու Սյարնի կողմերը այստարի չափազանց ամառ ըլլալուն պատճառաւ, բերքերու համար բաւական վնաս ըլլալէ զատ՝ մէկ քանի գործաւորներ ալ կեանքերնին կորուսեր են:

— Իզմիրի Էմբարտիալ լրագիրը տեղւոյն առևարական ժողովին նախագահին գէմ անհաճոյ հրատարակութիւններ ըրած ըլլալով, նախագահին կողմանէ դատի հրաւիրուեր է խմբագրապետը:

— Տրամայի մէջ՝ նախորդ ամսոյն 23ին գիշերը, և Սէլանիկի մէջ 27ին գիշերը գեանաշարժի անվնաս ցընցումներ տեղի ունեցեր են:

— Բրէզըրնի նորակազմ կուսակալութեան ընդհանուր կառավարիչ ան-

ուանեցաւ Պրուսայի նախորդ կուսակալ իսմայիլ փաշա :

—Սյաքնի կուսակալութեան ընդհանուր կառավարիչ անուանեցաւ վէլիէտտին փաշա :

—Էնգարէի ընդհանուր կառավարչութիւնը Պասթամուսիի նախորդ ընդհանուր կառավարիչ Համսի փաշային յանձնուեցաւ :

—Գաղղիոյ կայսրուհւոյն հետ մայրաքաղաքս և Եգիպտոս պիտի դանդաժաւանդ իշխանը և երեւելի գերզատաններէ խել մը տիկնայք : Նորին վեհափառութեան արամադրութեան ներքեւ պիտի գտնուի եղեր նաւատորմի մը :

—Կայսերական Սուլթանիչէ գըպըոյն տնօրէնը անցեալ չորեքշաբթի օրը Գաղղիա ուղեւորեցաւ, գալոցին պարագոյ օրերը հոն անցունելու համար :

—Գաղղիոյ կայսրուհին սեպտեմբերի վերջերը մայրաքաղաքս պիտի գտնուի, և Եգիպտոս դացած ասենը իզմիր ալ պիտի հանդիպի :

—Պանարմոյի մէջ վերջին օրերս սաստիկ փոթորիկ մը պատահելով, շուկան գերծակի ու ծխալճառի Վխանութներ, և կամուրջին եզրը կօշկախարի մը խանութ, ինչպէս նաեւ հացադործի մը խանութին կէսը փլեր են : Տակաւին յայտնի չէ որչափ վնասը ԼԱՄԸ, բայց բարեբաղդաբար մարդու կորուստ չկայ :

—Մնեալ շաբթու ծանուցինք իսկիւտար գտնուող բժշկաց կալմած ընկերութիւնը յօգուտ ալքատ հասարակութեան : Գահաթեանք կիմանամք թէ, Սարսնեան վաւիճ. Ստեփան պէյ այս ընկերութեան ժողովին

նախագահ ընտրուած է, և վոսթորի ասիական կողմը գտնուող բժիշկներն ալ հրաւիրուեր են ընկերութեան մասնակցելու համար : Պիտի կրնամք այս շաբթու մեր խոստման համեմատ ընդարձակ տեղեկութիւն տալ այս հասարակաց օգտակար ընկերութեան վրայ :

—Բերայի քաղաքագետական խորհուրդը կճանայ շուտով Բերա ալ հանել իսթամպուլէն Ազապպափու բերուած շուրէն :

Վերջին հեռագրի մը նայելով, Գաղղիոյ կառավարութեան նոր պաշտօնէից ընտրութիւնը լմնցեր է : Լոնտոնի գաղղիական դեսպանը արմաքին գործոց պաշտօնէաց անուանուեր է :

—Գաղղիոյ երեսփոխանական ընտրութեան առթիւ տեղի ունեցած խրոսովութիւնները Գաղղիոյ հասարակութեան համար սուղի նառած է : 5—600 միլիոն ֆրանկէն աւելի կհաշուեն եղած վնասը, գործաւորաց գործէքաշուելուն և գործարանացառուտուրին պակսելուն և ֆոնտօներուն իջնելուն պատճառաւ : Խոսովութեանց ասան կառավարութեան կողմանէ բռնուող գործաւորաց շատերուն վրայ շատ սասկ գտնուելով, կիարծուի թէ վարձքով դրդուած են աստեք, բայց տակաւին այսպիսի գրգռիչ մը երեւան ելած չէ : Շատ մը անմեղ մարդիկ ալ սխալմամբ բռնուեր են :

Չինաստանի մէջ շատ ձիւն ու անձրև եկած աստեն, բոլոր ժողովուրդը կուստունները գիւնելով, իրենց

կուռքերէն կինդրեն եղեր անձրեխն  
ու ձիւնին դադրիլը : Այս անգամ տես-  
նելով որ բնութիւնն իր գործը կշա-  
րունակէ , կորոտայ , կփայլատակէ , կը  
համարին թէ կուռքերն իրենց խն-  
դիրը կատարել չեն ուղեր , կբարկա-  
նան և զանոնք ալ դուրս կհանեն որ  
պէս զի իրենց հետ մէկտեղ անձրեխի  
տակ մնալով անհանդիսա ըլլան :

— Ամերիկայի մէջ կատուներու հա-  
մար կտակեալ շէնքին դիրքն ու մա-  
տակարարութեան եղանակը հետեւ-  
եալ կերպիւ պիտի ըլլայ ըստ կտակա-  
գրին , որ խիստ ծիծաղաշարժ է : Շէն-  
քը օդաւէտ տեղ մը պիտի ըլլայ . կա-  
տուներու և սպասուհեաց յատկացեալ  
160 սենեակներէ պիտի բաղկանայ .  
կատուներուն սենեակները ձմեռը  
մուշտակներով և ամառը զով բռնող  
կերպաններով զարդարուելու են . ա-  
մեն մէկ սենեակի մէջ չորս չորս կա-  
տուէ — արու և եղ — աւելի չպիտի  
գտնուի . 20 սենեակի գլուխ ընդար-  
ձակ սրահներ պիտի ձգուին , և անոնց  
զբօսանաց համար սրահներուն պա-  
տեղուն եղբրը յասուկ տեղեր 30ա-  
կան մկներ պիտի բերուին , և երբեմն  
դուրս հանելու համար տեղ տեղ ծա-  
կեր պիտի ըլլան . կատուներուն ճան-  
կին զոհ եղող միան տեղ ուրիշ մը դըր-  
ուելու է : — Այս հաստատութիւնը ի-  
գական սեռէն չամուսնացած 60 սպա-  
սուհի պիտի ունենայ . սեղանի և խո-  
հարարութեան դորձեալ 10 այսպիսի  
սպասուհիներու յանձնուելու է , գո-  
հացուցիչ ամսականներով : — կատու-  
ներուն նախաճաշիկը մի ջրով թըր-  
չուած ճերմակ հաց ու ֆիլէմէնիկ պա-  
նիր , ցերեկուաւնը համ միս ու պա-

նիր . իսկ երեկոցեանը՝ ընտիր ձկներ  
ըլլալու են : Ընթրիքէն յետոյ , ձը-  
մեռը սրահներուն մէջ , իսկ ամառը  
յատկապէս զարդարեալ պարտէզնե-  
րու մէջ նուագարաններ պիտի հնչեն  
մինչև կէս գիշեր : կատուներու համար  
յատկացեալ հիւանդանոցին ու դեղա-  
բանին մէջ ծառայողներն ալ իգական  
սեռէ և չամուսնացած պիտի ըլլան : Այս  
հաստատութիւնը պիտի կրնան պոր-  
տիլ չամուսնացած այր և կին մարդիկ :  
Տղոց ու ամուսնացելոց համար պոր-  
տիր արգելուած պիտի ըլլայ :

Արդեօք քանի հազար թշուառ-  
բանական կենդանիներ կգտնուին Ա-  
մերիկայի մէջ , թող ուրիշ տեղեր , որ  
պատառ մը հացի վրայ կգողան : Եր-  
ջանիկ էք , Ամերիկայի կատուներ ,  
այսպիսի անբանական մարդու մը շը-  
նորհիւ :

Պատմութիւնստորը , լըրատու գոր-  
շարք և ընդարեաց սիրահարք

Այս հանրածանօթ և ընտիր վէպին  
թարգմանութեան ու ապագրութեան  
ձեռք զմնուած է , շարժթը 16ական  
երեսէ բաղկացեալ երկերկու մեծ ա-  
դիր թերթեր հրատարակելով : Բա-  
ժանորդագրութեան դինն է մէկուկէս  
արծաթ մէճիտ . իսկ զատ թիւ առ-  
նել ու գողը հատին Ձ զուրուշ պիտի  
վճարէ : — Բաժանորդագրութեան տե-  
ղրն է Պ. Յ. Գալիաֆեանի գրատունը ,  
և Չորապօսի խանին գէմ թիւ 11 վա-  
ճառանոցը :

ՏՏՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ  
Հ. Ս. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո՞Յ. ԲՈՒՐԲՆԵԱՆ